Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Առավոտ
a r a v o t d a i l y

8/4104/ 19 հունվարի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224
11255
9 771829 222003

# Ա

# «Պիտանի» կրիմինալը

Երեկ ձերբակալվել է Աշոտ Ավետիսյանը, նույն ինքը՝ հանրահայտ Բանգլադեշի Համոն: Այդ մարդն ունի հարուստ եւ բովանդակալից քրեական կենսագրություն: 2004 թվականի ապրիլի 5-ին «Ազգային միաբանություն» կուսակցության կազմակերպած հանրահավաքի ժամանակ նա ձվեր էր նետում ԱՄԿ ղեկավար Արտաշես Գեղամյանի ուղղությամբ, իսկ երբ լրագրողները փորձեցին նկարահանել դա, նա ջարդեց նրանց ֆոտո եւ տեսախցիկները՝ բռնություն կիրառելով լրագրողների նկատմամբ:

2005 թվականի փետրվարի 4-ին Ավետիսյանն ակտիվ մասնակցություն ունեցավ երկու հանցավոր խմբավորումների միջեւ տեղի ունեցած եւ մարդկային կյանքեր խլած «Տէց-ի կռվի ճակատամարտին», որի ընթացքում կիրառվեց տարբեր տեսակի զինամթերք, այդ թվում նաեւ՝ ինքնաձիգներ: Երկու դեպքում էլ Համոն ստացավ պայմանական պատիժ:

2010 թվականին Տիգրան Մեծի պողոտայում նա վրաերթի էր ենթարկել մի քաղաքացու եւ փախուստի դիմել: Չնայած այդ քաղաքացին մահացավ՝ Ավետիսյանը դրա համար ընդամենը տուգանք վճարեց:

Սրանք այդ փառապանծ կենսագրության միայն մեզ հայտնի դրվագներն են: Հանցագործություններին նման փունջ ունեցող քաղաքացին, եթե նա լինե՛ր պակաս նշանավոր գործիչ, քան Բանգլադեշի Համոն է, վաղուց արդեն կդատապարտվեր ցմահ ազատազրկման: Սակայն Բանգլադեշցին հավանաբար մեծ ծառայություններ ունի Հայրենիքի առաջ, որոնք, մասնավորապես, արտահայտվել են երբեմնի ընդդիմադիր գործչի ուղղությամբ ձվանետմամբ: Այդ ամենը հաշվի առնելով՝ նա ոչ միայն ազատություն էր վայելում, այլեւ ղեկավարում էր «Նեպտուն» լողավազանը՝ իր հայրենի Բանգլադեշում: Այս անգամ նրա BMW X6 մակնիշի մեքենային համարձակություն ունեցավ բախվել մի սովորական 07: Բնական է, որ առնվազն երեք դրվագներով չպատժված Համոն պետք է վստահ լիներ, որ այս անգամ էլ իրեն ոչինչ չի սպառնում, ուստի եւ նա հարձակվեց 07-ի վարորդի վրա, ծեծի ենթարկեց, իսկ երբ ոստիկանները նրան փորձում էին տեղափոխել քաղմաս, նա չէր ենթարկվում իրավապահներին:

Ենթադրում եմ, որ այժմ էլ Բանգլադեշցու նկատմամբ որեւէ լուրջ պատիժ չի կիրառվի, պատճառը պարզ է. առաջիկայում սպասվում են խորհրդարանական ընտրություններ, եւ Համոյի նման մարդիկ օդի ու ջրի պես անհրաժեշտ են իշխանության կուսակցությունների եւ թեկնածուների հաղթանակն ապահովելու համար: Եթե բոլոր քրեական տարրերին մեկուսացնեն հասարակությունից՝ ո՞վ է ներխուժելու ընտրական տեղամասեր, քվեաթերթիկներ լցնելու եւ բռնություններ կիրառելու ընդդիմության ներկայացուցիչների հանդեպ: Հենց դրա համար են անհրաժեշտ Բանգլադեշցու նման «դուխով տղերքը», որոնք իրենց բռունցքներով եւ մկաններով հավատարմորեն կծառայեն տերերին:

Այնպես որ՝ մոտակա ամիսներին նախկինում այդ հարցերում իրեն արդարացրած կրիմինալին ոչինչ չի սպառնում: Սյունիքի մարզպետը՝ ձեզ օրինակ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# «Զարմացած եմ Պրեսկոտի ուրախության վրա»



ԵԽԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի համազեկուցող լորդ Ջոն Պրեսկոտը ՀՀ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանի հետ հանդիպման ժամանակ Հայաստանում առկա ընդհանուր մթնոլորտի վերաբերյալ ասել էր հետեւյալը. «Չորս տարի առաջ իրավիճակը դաժան էր, հանդիպումների ժամանակ մարդիկ խոսում էին կեղծված ընտրությունների, մարտիմեկյան իրադարձությունների մասին, հիմա մթնոլորտը եւ ակնկալիքները փոխվել են, որն իսկապես դրական երեւույթ է»: «Զարմացած եմ Պրեսկոտի ուրախության վրա: Ջոն Պրեսկոտն իր պարտականությունների մեջ թերացել է: Նա միշտ էլ այս տարիների ընթացքում հանդես է եկել ընտրությունները կեղծած իշխանությունների շահերից եւ հիմա էլ շարունակում է հավատարիմ մնալ իր գործողություններին, պրակտիկային, շարունակում է հանդես գալ նրանց պաշտպանությամբ: Ինչ վերաբերում է Պրեսկոտի արձանագրածին, թե՝ Հայաստանում մթնոլորտը փոփոխվել է, ասեմ, որ ոչ մի մթնոլորտ էլ չի փոփոխվել, նույն կեղծված ընտրությունների արդյունքում իշխանության եկած ուժերն են, նույն մարտի 1-ի գործն է, որ չի բացահայտվել, նույն զոհերի ծնողներն են, որոնք դժգոհ են նախաքննության արդյունքներից, նույն ընդդիմությունն է, որ շարունակում է բողոքել կեղծված ընտրություններից, ոչինչ չի փոխվել, եւ ուրախանալու ոչինչ չկա»,- aravot.am-ին ասաց իրավապաշտպան Վարդան Հարությունյանը:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### «Ազատ դեմոկրատները» մեծամասնականով էլ կառաջադրվի

Արդյոք ԱԺ առաջիկա ընտրություններում «Ազատ դեմոկրատները» մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ կունենա՞: Ի պատասխան «Առավոտի» այս հարցին՝ կուսակցության նախագահի Խաչատուր Քոքոբելյանն ասաց. «Այս պահի դրությամբ, այո, մենք հակված ենք մեծամասնական ընտրատարածքներում առաջադրումներ անել, նույնիսկ մտածում ենք հնարավորինս շատ առաջադրումներ անել: Նման քննարկումներ եղել են մեզ մոտ, եւ մենք մտադիր ենք առաջարկել ընդդիմադիր ուժերին մեծամասնական ընտրություններին մասնակցել միասնական թեկնածուներով: Պարզ է, որ ընդդիմությունը շատ մեծ ռեսուրսներ չունի՝ բացի հասարակական աջակցությունից: Հենվելով իր այդ հիմնական ռեսուրսի վրա՝ չպետք է փոշիացնի իր հնարավորությունները ու կարողանա միասնաբար հանդես գալ: Դա շատ ճիշտ լուծում կլինի, եթե, իհարկե, ընդդիմադիր հիմնական ուժերը կարողանան իրենց մեջ ուժ գտնել այդ մոդելով առաջնորդվելու»:

Կարդացեք էջ 3:

### 2007-ին ՀՀԿ-ն այլընտրանք չուներ

«2007-ին ՀՀԿ-ն ստիպված էր ինձ ընդգրկել ցուցակում: Իմ հեղինակությունը իրենց ահագին ձայներ կարող էր ապահովել, բացի այդ՝ այն ժամանակ Երկրապահին քվոտա էր տրվել, ԵԿՄ-ն էլ որոշել էր ինձ առաջադրել: ՀՀԿ-ն ուղղակի համաձայնել էր այդ որոշմանը: Այդտեղ ուրիշ հանգամանքներ էլ կային՝ կապված տարածաշրջանի գլխավոր դերակատարների հետ: Այնուհանդերձ, եթե իմ ընկերները կարող են համակերպվել անարդարության հետ, ես չէի կարող: Ես իմ ազգի զինվորն եմ, ես ազգին եմ ծառայում»,- երեկ «Առավոտի» հետ զրույցում հիշեց նախկին պատգամավոր, նախկին քաղբանտարկյալ Միասնիկ Մալխասյանը:

Կարդացեք էջ**D**2:

### Ֆրանսիական Սենատի հանձնաժողովը մերժեց օրինագիծը

Ֆրանսիական Սենատի իրավական հարցերով հանձնաժողովը երեկ 23 կողմ, 9 դեմ ձայների հարաբերակցությամբ մերժել է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը՝ պնդելով, թե այն հակասում է Ֆրանսիայի Սահմանադրությանը: Չնայած հանձնաժողովի մերժմանը՝ օրինագիծը, այնուամենայնիվ, հունվարի 23-ին քննարկման կդրվի Սենատի լիագումար նիստում:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Ազդակ» ակումբի հյուրն է ԲՀԿ պատգամավոր Վարդան Բոստանջյանը:

### Եղանակ

Երեւան - 4 + 1, Շիրակ - 14 - 1, Կոտայք - 12 0, Գեղարքունիք - 14 0, Լոռի - 8 + 2, Տավուշ - 7 + 7, Արագածոտն լեռներ - 12 - 2, Արագածոտն նախալեռն. - 6 + 4, Արարատ - 6 + 4, Արմավիր - 6 + 4, Վայոց Ձոր լեռներ - 12 + 2, Վայոց Ձոր նախալեռն. - 5 + 7, Սյունիքի հովիտներ - 5 + 8, Սյունիքի նախալեռներ - 7 + 2, Արցախ - 3 + 7

## Ով է թագավոր պատգամավորը, ով՝ գողը

Հայաստանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը երեկ ասուլիսում խոսելով մեծամասնական ընտրակարգի մասին՝ ասաց. «Դուք շատ լավ գիտեք մեր իրավիճակը, թե ինչ է եղել ամեն տարի մեծամասնականի ժամանակ: Եթե թեկնածուներից մեկը տանիք վերանորոգի, ասֆալտ անի, դա պատգամավոր չի, ընտրություն չի: Ես նրանց հետ մի դահլիճում նստել եմ, գիտեմ՝ ովքեր են: Եթե ուզում եք այս պառլամենտը փոխվի՝ առաջարկում ենք մեծամասնականը հանել, չեմ ասում, որ դա վատ գաղափար է, բայց Հայաստանի պայմաններում դա անընդունելի է, որովհետեւ սա է մեր սոցիալական վիճակը, եւ այդ վիճակից օգտվողներ կան: Սա է այն իրավիճակը, երբ որ գողը չի նստած բանտում, այլ գնում-պատգամավոր է դառնում, մի քանի կոպեկ մարդկանց փող են տալիս՝ իրենց թագավոր են ասում»:

Aravot.am-ը պարոն Սարգսյանից հետաքրքրվեց, թե գողեր, թագավորներ ասելով՝ կոնկրետ մարդկա՞նց նկատի ունի, թե՞ ընդհանուր դաշտի մասին է խոսքը՝ նա պատասխանեց. «Գիտեք, ինձ համար դա խնդիր չի, ես պառլամենտում եմ իրենց ասել, ինչ որ ասել եմ, ես հիմա անունը տամ-չտամ՝ հարցը դա չի, իրենք բոլորն էլ գիտեն, որ համակարգն է այդպիսին: Ո՞ր մեկինը ասեմ, որը՝ չասեմ»:

Մեր դիտարկմանը, որ բոլորս գիտենք կոնկրետ մարդու, որին թագավոր են կոչում՝ պարոն Սարգսյանը վստահեցրեց, որ հարցը միայն նա չէ. «Ինքը չի: Կան, որ իրենց գյուղի, քաղաքի մակարդակով են այդպիսին, իսկ են մեկը շատ մեծ բարեգործություններ է անում՝ դրա համար աչքի է ընկնում, մյուսները ստվերի մեջ են: Ինձ անհատը չի հետաքրքրում, ինձ հետաքրքրում է՝ մենք մեր երկրում կարո՞ղ ենք նորմալ համակարգ ստեղծել, թե՞ ոչ, սա է խնդիրը»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# Նախագահների՞, թե՞ Մեդվեդեւի հետ իրաժեշտի հանդիպում

Հունվարի 23-ին Սոչիում տեղի կունենա Հայաստանի, ՌԴ-ի եւ Ադրբեջանի նախագահների հերթական հանդիպումը: Այս մասին տեղեկություն է տարածել ՀՀ նախագահի տեղեկատվական ծառայությունը:

Ըստ որոշ տեղեկությունների՝ այդ հանդիպմանը ներկա կլինեն նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Երեկ Մոսկվայում կայացած մամուլի ասուլիսում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը հաստատեց տեղեկությունները՝ հայտնելով, որ համանախագահները եւս կմասնակցեն նախագահների հանդիպմանը: ՌԴ արտաքին գործերի նախարարը նաեւ ասել է. «Ռուսաստանը կշարունակի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միջնորդական ջանքերը»:



Հանդիպումից օրեր առաջ արդեն սկսվել են մեկնաբանությունները եւ վերլուծությունները այն մասին, թե ինչ է տալու Սոչիում հերթական հանդիպումը, եւ որքանով կարող է այն լինել կարեւոր: Ըստ հայաստանյան քաղաքական ուժերի ներկայացուցիչների՝ Սոչիում ոչ մի էական բան էլ չի լինելու, քանի որ, սովորաբար, ընտրություններին այսքան մոտ ժամանակահատվածում ոչ մի երկրում ոչ մի էական եւ կարեւոր բան չի փոխվում: Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումից որեւէ բեկում չեն ակնկալում նաեւ փորձագետները. «Չեմ կարծում, որ առաջիկա հանդիպման ժամանակ ԼՂ հարցում բեկում կարձանագրվի, համենայնդեպս՝ Ադրբեջանի որդեգրած դիրքորոշումները լավատեսություն չեն ներշնչում»,- panorama.am-ի հետ զրույցում ասել է փորձագետ Էդգար Հովհաննիսյանը:

Ադրբեջանական 1news.az կայքի հետ զրույցում, Սանկտ Պետերբուրգի ժամանակակից՝ Մերձավոր Արեւելքի հետազոտական կենտրոնի առաջատար վերլուծաբան Ալեքսանդր Սոտնիչենկոն ընդգծել է, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունն անօգուտ է համարում: Ըստ վերլուծաբանի՝ հաջողության հասնելու համար ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացում մեկ այլ միջազգային կառույց պետք է ներգրավվի, որը, հաշվի առնելով նախորդի սխալները, հակամարտության կարգավորմանն ուղղված նոր մոտեցումներ կառաջարկի. «Այս առումով ես հիմնախնդիրը ԵԱՀԿ իրավասությունից հանելու կողմնակից եմ, կողմնակից եմ, որպեսզի ԼՂ հակամարտության կարգավորման համար տարածաշրջանային կազմակերպություն ստեղծվի, որի գլխավոր գործող անձինք Ռուսաստանն ու Թուրքիան կլինեն՝ ՄԱԿ-ի հովանու ներքո»:

«Առավոտի» խնդրանքով մեկնաբանելով այս մտքերը՝ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը նկատեց, որ բանակցային ձեւաչափի որեւէ փոփոխություն նախատեսված չէ, եւ ԵԱՀԿ Մինսկի խումբը բավականին ակտիվ է աշխատում. «Եթե մենք խոսում ենք ՄԱԿ-ի նպատակների մասին, ապա չպետք է մոռանանք, որ ՄԱԿ-ի նպատակներից է ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ մենք չենք կարող շիարգել ինքնորոշման իրավունքը եւ առանց ԼՂՀ ժողովրդի լուծել խնդիրը, այդ պատճառով էլ առաջընթացն առայժմ մշուշոտ է: Մյուս կողմից էլ համանախագահող երկրների նախագահները բազմիցս են հայտարարել, որ Մինսկի խումբը լավագույն ձեւաչափն է հարցի կարգավորման ճանապարհին. այդ մասին խոսել է եւ պարոն Սարկոզին, եւ պարոն Մեդվեդեւը, եւ մենք շնորհակալ ենք բոլոր այն կողմերին, որոնք հնարավորինս ամեն ինչ անում են, որպեսզի բանակցային գործընթացը գնա միայն խաղաղ ճանապարհով, եւ այս իմաստով բարձր ենք գնահատում ՌԴ նախագահի ջանքերը: Իսկ թե ինչո՞ւ առաջընթաց այդպես էլ չի լինում, կարծում եմ, պատասխանը պարզ է՝ պատճառը Ադրբեջանի ապակառուցողական պահվածքն է:

Մենք պատրաստ ենք փոխզիջումների, բայց եւ պնդում ենք, որ երբեք դրանք չեն կարող լինել միակողմանի, եւ առաջին հերթին Ադրբեջանը պետք է ասի իր փոխզիջման մասին եւ կոնկրետացնի, թե որն է այդ փոխզիջումը: Քանի դեռ այդ մասին չի ասվել, քանի դեռ Ադրբեջանը խոսում է պատերազմի մասին եւ պատրաստակամություն չի հայտնում բանակցությունների սեղանի շուրջ նստել ԼՂՀ ներկայացուցիչների հետ, ես մշուշոտ եմ համարում առաջընթացը բանակցային գործընթացում»:

Ըստ մեր զրուցակցի՝ պատերազմի մասին խոսողները պետք է ընկալեն, որ այն իրենց համար խիստ վտանգավոր կարող է լինել. «Իսկ առաջընթացը բանակցային գործընթացում կախված է միայն եւ միայն Ադրբեջանի կառուցողական մոտեցումից, կլինի՞ Ադրբեջանը կառուցողական՝ կլինի առաջընթաց: Այսինքն՝ այդ երկիրը իր նախագահի շուրթերով ոչ թե պետք է ասի, որ խնդիրը ունի երկու լուծում՝ կամ խաղաղություն, կամ պատերազմ, այլ պետք է գիտակցի, որ չկա «կամ-կամ», կա միայն խաղաղություն: Իսկ պատերազմը աղետ կլինի առաջին հերթին Իլհամ Ալիեւի համար, ինքը վատ է պատկերացնում պատերազմի հետեւանքները, քանի որ պատերազմի ժամանակ ինքը Ստամբուլում զբաղված էր բիզնեսով եւ միլիոններ կուտակելով: Երկրորդը՝ Ադրբեջանը եթե իրոք ուզում է խաղաղություն եւ առաջընթաց, ուրեմն պետք է գիտակցի, որ բանակցային պրոցեսին առանց ԼՂՀ լիարժեք մասնակցության, չի կարող առաջընթաց արձանագրվել, որովհետեւ որեւէ մեկը ի զորու չէ առանց ԼՂՀ ժողովրդի լուծել խնդիրը»:

ՄԱՐԳԱՐԻՏ ԵՍԱՅԱՆ

# Երբ իրավիճակ կփոխվի՝ Սիրունյանը հակառակը կասի

## Կարծում է Մյասնիկ Մալխասյանը

«Սուրեն Սիրունյանը «7-ի գործով» մեզ հետ եղել է ամբողջ դատավարության ընթացքում եւ ամենաակտիվներից մեկն է եղել: Վերցրեք իր բոլոր հայտարարությունները կարդացեք: Հիմա ի՞նչ պատահեց Սուրեն Սիրունյանի հետ, որ այսօր... ուրեմն ծանր իրավիճակում է գտնվում, որ նման հայտարարություն է անում: Ես ափսոսում եմ, ցավում եմ, որ նա այդ վիճակում է եւ նման հայտարարություններ է անում: Դա իր կամքն է: Բայց ես համոզված եմ, միառժամանակ հետո, երբ իրավիճակ փոխվի, նա հակառակն է ասելու»,- «Առավոտի» հարցին՝ ինչպե՞ս կմեկնաբանեք «7-ի գործով» նախկին քաղբանտարկյալ Սուրեն Սիրունյանի այն հայտարարությունը, որ ինքը պատրաստվում է ՄԻԵԴ-ից ետ վերցնել իր դիմումը, քանի որ չի պատրաստվում «որոշ մարդկանց ձեռքին նրանց շահերի համար գործիք հանդիսանալ» (Սիրունյանը նկատի ունի ՀԱԿ-ին - Ն. Գ.), պատասխանեց «7-ի գործով» մեկ այլ քաղբանտարկյալ՝ «Քաղբանտարկյալներ» հասարակական նախաձեռնության համակարգող Մյասնիկ Մալխասյանը: Հիշեցնենք, որ aravot.am-ին տված հարցազրույցում Սիրունյանը հայտարարել էր, որ ինքը եւ այլ նախկին քաղբանտարկյալներ պատրաստվում են ետ վերցնել ՄԻԵԴ-ին ներկայացրած իրենց դիմումները:

Մեր զրուցակիցն այստեղ խնդիրը չի դիտարկում նորից ՀԱԿ վերադառնալը: Հիշեցնենք, որ Սուրեն Սիրունյանը ՀԱԿ-ից հեռացավ մոտ մեկուկես տարի առաջ՝ ՀՀՇ հայտնի համագումարից հետո, մի շարք կարկառուն ՀՀՇ-ականների հետ: Եթե ՀՀ որեւէ ատյանի դատարան չի զղջացել եւ չի ընդունել իր սխալը՝ Մալխասյանի համար անհասկանալի են Սիրունյանի կամ այլոց «զղջումները», հետեւաբար այդ առիթով Սիրունյանի մեկնաբանությունները նա համարում է ընդամենը «խոսքի վարժանքներ» եւ հավելում. «Մեզ մեղադրել են ծանր հանցագործության՝ պետական հեղաշրջման մեջ, եւ իբր մեր գործողությունների արդյունքում 10 մարդ է զոհվել: Մենք դիմեցինք ՀՀ արդարադատության երեք ատյաններին՝ փորձելով արդարություն գտնել: Ցավոք, դա մեզ չհաջողվեց, եւ մենք հարկադրված դիմել ենք Մարդու իրավունքների եվրոպական դատարան, որպեսզի ապացուցենք, որ իրական հանցագործները, պետական հեղաշրջման իրական կազմակերպիչները, 10 անմեղ անձանց գնդակահարած մարդասպանները դեռ չեն պատժվել: Եթե որեւիցե մեկը ՄԻԵԴ-ից ետ կվերցնի իր դիմումը, ինքնըստինքյան կընդունի, որ ինքը պետական հեղաշրջման մասնակից է, որ 10 անմեղ զոհերի արյունն իր վրա է: Յուրաքանչյուր գիտակից մարդ չի գնա այդ ճանապարհով: Ցավում եմ այդ մարդկանց համար, գտնում եմ, որ մենք ապրում ենք մի այնպիսի երկրում, որ իշխանությունները մարդկանց դնում են այնպիսի իրավիճակի մեջ, որ նրանք իրենց դեմ հայտարարություններ են անում: Դա ամենավատ, ամենադատապարտելի արարքն է»:

Մյասնիկ Մալխասյանն արդեն հայտարարել է, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններին ինքը պատրաստվում է մեծամասնական ընտրակարգով պայքարի մեջ մտնել ապարանցի պատգամավոր Լյովա Խաչատրյանի եւ «Նիգ-Ապարան» հայրենակցական միության պատվավոր անդամ Վրեժ Մարկոսյանի հետ: «Առավոտը» հետաքրքրվեց՝ քանի որ Մալխասյանը, ժամանակին լինելով անկուսակցական, պատգամավոր էր ՀՀԿ ցուցակով եւ վայելում էր հանրապետականների անվերապահ աջակցությունն ու վստահությունը, բանտից դուրս գալուց հետո փորձե՞լ է հանդիպել իր նախկին ընկերներին, պարզաբանել անցյալի կնճիռները, նաեւ՝ առաջիկա ընտրությունների վերաբերյալ ինչ-ինչ պայմանավորվածություններ ձեռք բերել: Մալխասյանն ասաց, որ ինքն ու իր ընկերները առաջադրվելու են բացառապես նրա համար, որ ՀԱԿ-ի պայքարը հասնի իր տրամաբանական ավարտին, ու ժողովուրդն էլ գա այն գիտակցության, որ իր այսօրն ու վաղվա օրը չպետք է վաճառի 5000 դրամով: Ինչ վերաբերում է հարցի մյուս մասին, Մյասնիկ Մալխասյանն ասաց. «Ովքեր ինձ ընկեր են, ինձ հետ բանտում նստած են եղել: Շատ քիչ մարդիկ կան, որոնք դուրս գալուց հետո... իսկ մնացածը... մնացածի մասին ես չեմ կարող... կամ ինչի՞ պիտի հանդիպեմ, պարզեմ: Խոսելու բան չկա: Նրանք մարդիկ են, որ չեն կարող ինքնուրույն որոշում կայացնել, նրանց պետք է հանձնարարություն տրվի, իսկ ո՞վ պիտի հանձնարարություն տա՝ հանդիպել ինձ: Էդ հարցը քննարկելու իմաստ ես չեմ տեսնում»: Մալխասյանը բանտից դուրս գալուց հետո չի առնչվում նաեւ ԵԿՄ-ի հետ. «Առանձին ընկերների հետ շփվում ենք: Ես հիմա ավելի շատ շփվում եմ ժողովրդի այն հատվածի հետ, ովքեր ազնիվ են, նպատակ ունեն Հայաստանն այս իրավիճակից դուրս բերել, եւ հույսեր եմ կապում նրանց մարտական տրամադրությունների տարածման հետ, որը կարող է մեզ հաջողություն բերել»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 19.01.2012

# Ազատականները ԱԺ-ում կլինեն

## Վստահեցնում է «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանը

- Պարոն Քոքոբելյան, նոր մեկնարկած տարին նախընտրական է, իսկ Ձեր գլխավորած «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունն արդեն բազմաթիվ առիթներ է ունեցել հայտարարելու, որ մասնակցելու է առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Կարծում եք՝ կհասցնե՞ք, որպես նորաստեղծ կուսակցություն, ներկայանալ հանրությանն ու ընկալելի կուսակցություն-թեկնածու լինել առաջիկա ընտրություններում:

- Նախընտրական եռուզեռից անցած տարին էլ, այս կամ այն կերպ, զերծ չէր: Այդ գործընթացները ավելի շուտ սկսվեցին, որովհետեւ Հայաստանում քաղաքական կրքերն արագ են շիկանում, ու նաեւ քաղաքական դաշտում հստակություն դեռեւս գոյություն չունի, ինչը, իմ կարծիքով, քաղաքական համակարգի ոչ լիակատար լինելու հետեւանքն է:

Նախընտրական շրջանն առաջիկա խորհրդարանական ընտրություններով չի ավարտվելու: Սա քաղաքական գործընթացների ընդամենը մի ցիկլն է, որովհետեւ ԱԺ ընտրություններին անմիջապես հաջորդելու են նախագահի ընտրությունները: Ասել կուզեմ՝ սա մի ամբողջական պրոցես պետք է դիտարկել, եւ առաջիկա ընտրությունները միայն ԱԺ ընտրություններ չեն լինելու. դրանք ավելի շատ դիրքային եւ մոտեցումների հստակեցման փուլ կլինեն՝ միտված ապագա նախագահական ընտրություններին:

Մենք, բնականաբար, որպես ազատական քաղաքական ուժ եւ ազատ դեմոկրատներ, մարդիկ ենք, որոնք իրենց կենսագրությամբ եւ ապրած կյանքով ապացուցել են, որ միշտ պայքարել են ազատ եւ արդար, մրցունակ Հայաստան ունենալու համար, եւ շարունակելու ենք պայքարը նույն արժեհամակարգի համար:

Մեզ համար նաեւ հստակ է, որ Հայաստանում որեւէ քաղաքական ուժ ինքնուրույն ի վիճակի չէ դիմագրավելու այն մարտահրավերներին եւ լուծելու այն խնդիրները, որոնք այսօր ծառացել են մեր երկրի եւ քաղաքացիների առջեւ: Այդ առումով առանց մեր առաջնայնությունը շեշտադրելու մենք փորձելու ենք լինել հարթակ եւ ամեն ինչ անելու ենք այդ գիտակցումն ունեցող քաղաքական ուժերի միասնաբար հանդես գալու առումով: Այսօր բոլորը, ովքեր չեն ալարում, խոսում են արդար ընտրություններից եւ իրենց մոտեցումներն են շարադրում: Ես ուզում եմ հստակ ասել՝ արդար, ազատ, թափանցիկ ընտրություններն անհրաժեշտ պայման են Հայաստանի զարգացման համար, բայց բավարար չեն: Միայն արդար ընտրությունների հիման վրա ձեւավորված իշխանությունն, իմ խորին համոզմամբ, ի վիճակի չի լինի Հայաստանն առաջ մղել: Իմ կարծիքով՝ արդար ընտրությունների արդյունքում նաեւ պետք է ձեւավորվի այնպիսի իշխանություն, որն ի զորու կլինի Հայաստանն առաջ տանել աշխարհաքաղաքական տեսանկյունից այսօրվա նուրբ եւ բարդ իրավիճակում:

- Ի՞նչ չափանիշներով են որոշվելու, թե որն է այդ իշխանությունը:

- Չափորոշիչներն ակնհայտորեն շատ են, բայց առաջինը, ըստ իս, այն է, որ այդ իշխանությունը պետք է ձեւավորված լինի ոչ միայն պրոֆեսիոնալներից, այլեւ այն անհատներից, որոնք ունակ են իրենց առջեւ դրված խնդիրները ոչ միայն ձեւակերպել, այլեւ լուծել, նաեւ ազնիվ ու արդարամիտ լինել: Այսօր արագ տեմպերով զարգացող աշխարհում հնարավոր չէ պարզունակ լուծումներով երկիրը դեպի զարգացում տանել: Մինչդեռ քաղաքական դաշտում այսօր բանավեճի առարկան եւ բարձրաձայնվող մոտեցումները շատ պարզունակ խնդիրների շուրջ են, իրական մրցակցություն կամ բանավեճ ավելի լուրջ ու գլոբալ հարցերի շուրջ չկա, թեեւ քաղաքացու բարեկեցությունը միայն պարզունակ ու կենցաղային հարցերով չի պայմանավորված: Ակնհայտ է, որ կան ավելի լուրջ խնդիրներ, որոնք ունեն մեր երկիրն ու քաղաքացիները, ակնհայտ է նաեւ, որ այսօր երկրում առկա քաղաքական համակարգն է պատճառը, որի արդյունքում ընտրվում են անձինք, որոնց գործունեության արդյունքում ունենք սոցիալական ծանր վիճակ եւ արտագաղթ, որը դարձել է մեր երկրի առջեւ ծառացած հիմնական մարտահրավերը: Մեր, որպես ազատական ուժի, ընկալմամբ՝ ՀՀ-ի այսօր ունեցած ամենամեծ կապիտալը հենց իր քաղաքացիներն են, եւ այսօր ահագնացող արտագաղթը մեզ զրկում է այս կապիտալից: Դա մեր երկրի համար ներքին արյունահոսության նման մի բան է, երբ սկզբում չես հասկանում, թե ինչ է կատարվում, իսկ հետո արդեն ուշ է լինում եւ հայտնվում ես ծայրահեղ հյուծված վիճակում: Աշխարհն իր փորձով դրանց լուծումներն արդեն տվել է, եւ նոր գյուտ անել պետք չէ, ուղղակի պետք է լավ մոդելներ կիրառել, ճիշտ մոտեցումներ ընտրել, որի արդյունքում Հայաստանը աստիճանաբար կարող է զարգանալ: Պարզ է, որ դա մեկ օրվա խնդիր չէ, բայցեւ ակնհայտ է, որ ձգձգելու կամ առավել եւս՝ այսպես շարունակելու ռեսուրս Հայաստանը չունի: Այս համատեքստում «Ազատ դեմոկրատները» ունի մասնավորապես արդեն գրեթե



ավարտին հասցրած տնտեսական ծրագիր, որը կուսակցության առաջիկա համագումարում կներկայացվի: «Հայաստանի Հանրապետությունը 2012-ին եւ հետո» կոչվող ծրագրում շարադրված են ոչ թե մեկ-երկու տարիների, այլ, թող շատ հավակնոտ չթվա, առաջիկա 15 տարիներին միտված մեր այն մոտեցումները, որոնք ուղղված են լինելու Հայաստանի զարգացմանը: Մենք ուրախ կլինենք, որ այդ ծրագիրը դառնա հանրության եւ մեր գործընկեր քաղաքական ուժերի սեփականությունն ու փորձ արվի դրանով նաեւ առաջնորդվել:

- «Ազատ դեմոկրատների» անունը հաճախ հնչում է «Ժառանգություն» կուսակցության հետ հնարավոր դաշինք ստեղծելու համատեքստում, որոշակիություն կա՞ այդ հարցում:

- «Ժառանգության» հետ ակտիվ շփումներ կան, եւ նրա հետ մենք լայն համագործակցության դաշտ տեսնում ենք, ու չեմ բացառում, որ այդ համագործակցությունը, իրոք, կարող է վերածվել նախընտրական դաշինքի: Եթե նման հանրային պահանջ լինի, կարծում եմ, թե՛ «Ժառանգությունը», թե՛ մենք դրան կգնանք:

- Ինչպե՞ս է գնահատվելու՝ հանրային պահանջ կա՞, թե՞ ոչ:

- Այսինքն՝ մեր անձնական մոտեցումները քիչ են, հասարակությունն էլ պետք է տեսնի այդ միավորման անհրաժեշտությունը: Անձամբ ես հակված եմ «Ժառանգության» հետ ավելի լայն համագործակցության, եւ, կարծում եմ, դա փոխադարձ է, որովհետեւ շատ հարցերում մենք ուղղակիորեն նույն տեսակետն ունենք, մասնավորապես՝ տնտեսական, երկրում առկա իրավիճակի հետ կապված մեր քաղաքական գնահատականների առումով: Եվ վերջապես, պետք է հաշվի առնել, որ «Ժառանգությունն» այն ուժն է, որն ավելի լավ Հայաստան ունենալու համար, նաեւ այս վերջին տարիների իր բուռն պայքարի ողջ ժամանակահատվածում իրեն ճիշտ է դրսեւորել եւ հանրության կողմից կարողացել է ընկալելի ու հասկանալի լինել: Դա մեզ համար շատ կարեւոր հանգամանք է:

Արտաքին քաղաքական ոլորտում, բնականաբար, տարբեր մոտեցումներ էլ կան, որոնք, ըստ իս, զուտ մարտավարական խնդիրներ են, եւ երբ ավելի լայն համագործակցության համար վճռական պահ գա՝ այդ խնդիրները կարելի կլինի նորից քննարկել: Ինձ համար ցանկալի տարբերակներից մեկը դա է: Ուզում եմ շեշտել նաեւ, որ մեր պայքարը չի սահմանափակվում Ազգային ժողովի ընտրությունների համատեքստում, ու ընդհանրապես՝ իմ խորին համոզմամբ, քաղաքական ուժերն այդ ընտրությունները չպետք է ինքնանպատակ դարձնեն: Մեր՝ առաջիկա ընտրություններին մասնակցության հնարավոր ձեւաչափի առանցքն ու նպատակը ՀՀ առաջիկա զարգացմանը միտված մեր ծրագրերի իրագործումն են, այլ ոչ թե խորհրդարանական ընտրությունների նեղ արշավը:

- «Ազատ դեմոկրատների»՝ խորհրդարանում հայտնվելու շանսերն ինչպե՞ս եք գնահատում:

- Անկախ ամեն ինչից՝ մենք առաջին հերթին ակտիվ ենք լինելու, պայքարելու ենք քաղաքակիրթ մեթոդներով եւ քաղաքական լծակներով, որպեսզի հանրության հնարավորինս լայն շրջանակի համար հասկանալի եւ ընկալելի լինենք, եւ փորձելու ենք ավելի մեծ աջակցություն ստանալ հասարակության կողմից: Մենք շեշտը դնելու ենք հասարակության գիտակից այն հատվածի վրա, որն իր ապագան կապում է Հայաստանի ու մեր երկրում բարեկեցիկ ապրելու եւ ոչ թե Հայաստանը լքելու հետ: Նաեւ բավարար ռեսուրսներ ունենք առաջիկա ընտրություններին մասնակցելու համար՝ ե՛ւ մարդկային ռեսուրսի, ե՛ւ կազմակերպչական, ե՛ւ ներկայացվելիք ծրագրի առումով: Վստահաբար ասում եմ, որ բոլոր ընտրատեղամասերում կունենանք մեր վստահված անձինք, բոլոր ընտրատարածքներում կունենանք նախընտրական շտաբներ, ունենք նաեւ ընտրություններին մասնակցելու մեծ փորձ ունեցող կուսակցականներ ու համակիրներ եւ գիտենք պայքարի, նաեւ կեղծիքներին դիմակայելու բոլոր մեթոդները: Մենք մեր ուսերին ընտրություններ շատ ենք տարել եւ լավ ենք պատկերացնում այդ գործընթացը: Առաջիկայում առիթ կունենաք դրանում համոզվելու:

- Իհարկե, կանխատեսում անելն անշնորհակալ գործ է, բայց, այնուամենայնիվ, Ձեր դիտարկմամբ, առաջիկա ընտրությունների արդյունքում նոր խորհրդարանն ի՞նչ տեսք կունենա քաղաքական ուժերի ներկայացվածության առումով:

- Դա սոցիոլոգների գործն է: Ես միայն վստահաբար կարող եմ ասել, որ առաջիկա ընտրություններից հետո ազատականներն անհամեմատ ավելի մեծ ներկայացվածություն կունենան ԱԺ-ում:

- Ինչո՞ւ եք այդպես կարծում:

- Նախ՝ մեր հասարակությունը միշտ շատ ճիշտ է գնահատել իրավիճակը՝ սկսած 1991 թվականից, կարողացել է ճիշտ կողմնորոշվել, եւ եթե նկատել եք, ընդդիմությունը մեր երկրում մշտապես հասարակության կողմից շատ մեծ աջակցություն է ստացել: Ուղղակի դեպքերի բերումով միշտ այնպես է ստացվել, որ ընդդիմությունը չի կարողացել տեր կանգնել իր ձայներին: Սա փաստ է: Սրանից ընդդիմադիր քաղաքական ուժերը պետք է հետեւություններ անեն եւ հասկանան, թե ինչ մեխանիզմ պետք է գտնել եւ կիրառել այդ ձայներին տեր կանգնելու համար:

- Դուք գտե՞լ եք այդ մեխանիզմը:

- Բնականաբար, որովհետեւ բազում անգամ բախվել ենք այդ խնդրի հետ եւ ինքներս մեզ համար հետեւություններ արել ենք՝ անշուշտ: Ինքս կարծում եմ, որ չի կարելի հասարակությանը մեղադրել ձայն տալու եւ իր ձայնին տեր չկանգնելու մեջ, որովհետեւ ՀՀ շարքային քաղաքացին, ընտրողը պարտավոր չէ ձայն տալուց բացի՝ նաեւ իր տված ձայնի համար կռիվ տալ: Դա պետք է անեն այն ուժերը, որոնց քաղաքացիներն աջակցել եւ իրենց վստահության քվեն են տվել: Իմ պատկերացմամբ՝ դա քաղաքական ուժերի ակտիվի գործն է:

- Ե՞րբ է լինելու Ձեր գլխավորած կուսակցության համագումարը, ու պե՞տք է արդյոք սպասել, որ այդ համագումարում կորոշվի առաջիկա ընտրություններին ձեր մասնակցության ձեւաչափը:

- Բնականաբար՝ այո: Կներկայացվեն ե՛ւ ձեւաչափի, ե՛ւ մեր մարտավարության ու ռազմավարության խնդիրները, համագումարում դա կքննարկվի: Այս պահի դրությամբ մտադիր ենք համագումարը հրավիրել փետրվարին, ու հանրության ավելի լայն շրջանակների համար հասկանալի կլինեն մեր մոտեցումներն ու պատկերացումները առաջիկա ընտրությունների ու ընդհանրապես Հայաստանի ապագայի վերաբերյալ:

Հարցազրույցը վարեց
ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԸ

# «Տողակի դիմաց անդամագրվելու խնդիր չի եղել»

Վերջին շրջանում մամուլը ողողված է ՕԵԿ-ի ընտրակաշառքների մասին հրապարակումներով: Ըստ այդ նյութերի, կուսակցությունը «Հայասի» օղիներ է բաժանել տարբեր մարզերում, սուրճ, բնական հյութեր եւ այլն:

Այս առնչությամբ aravot.am-ի հետ զրույցում ՕԵԿ պատգամավոր Հովհաննես Մարգարյանը կտրականապես հերքեց, որ իրենք ընտրակաշառք են բաժանել. «ՕԵԿ-ն իր 15-ամյա պատմության մեջ որեւէ անգամ ընտրակաշառք չի բաժանել: Այլ բան է, որ ՕԵԿ-ը միշտ էլ իր անդամներին իր հնարավորության չափով տարբեր տոների առթիվ տարբեր նվերներ է տվել, սա հերթական նվերն էր, որ մենք տվեցինք»: Նա վստահեցրեց, որ ամանորյա տողակները բաժանվել են բացառապես ՕԵԿ անդամներին եւ ՕԵԿ-ական ընտանիքներին, իսկ պատահական մարդկանց տողակի դիմաց անդամագրվելու խնդիր չի եղել. «Մենք ընտանիքներին բացիկներ էլ ենք տվել, այդ թվում՝ Նոր տարվա հետ կապված որոշակի պարագաներ: Ուղղակի ի տարբերություն շատ շատերի՝ մենք ընդհանուր առմամբ ինչ տրամադրում ենք նվերի տեսքով, որեւէ անգամ չենք ցուցադրել եւ չենք ցուցադրելու: Երկիրը փոքր է, խոսում են՝ ի՞նչ վատ բան կա այդտեղ»:

Մեր հարցին՝ բա ինչո՞ւ նախորդ Նոր տարվա նվերների մասին չէին խոսում եւ նման նվերների մասին լուրեր չեղան, միայն այս նախընտրական տարվա մասին նվերները մեջտեղ ելան՝ նա պատասխանեց. «Չէ, չէ, նախորդ տարի էլ է եղել, սեպտեմբերի 1-ին էլ է եղել, պարբերաբար մենք մեր հնարավորությունների սահմանում բացառապես մեր կուսակիցներին նվերներ ենք անում: Ընտրակաշառք չի եղել, չի էլ լինելու, իսկ նվերներ եղել են եւ լինելու են: Կարծում եմ՝ ամբողջ աշխարհը գիտի, որ ՕԵԿ-ը միշտ ձայներ վաստակել է, վստահության քվե է ստացել՝ ջիգյարով ձայներ՝ առանց քոռ կոպեկի: Մենք միշտ նվերներ էլ ենք տվել, պատվոգրեր էլ ենք տվել, դա ավանդաբար մեզ մոտ կա»:

Հարցին՝ այն, որ ձեր նախկին կուսակից ընկերը՝ Սամվել Բալասանյանն էլ Գյումրիում բնակարաններ ու պլեհավաքներ էր նվիրում, սրա հետ կապված ի՞նչ կասեք, գուցե ՕԵԿ-ից նվեր տալու «լավ ավանդույթը» մնացե՞լ է՝ նա պատասխանեց. «Ես մեկնաբանեցի մեր տեսակետը եւ որեւէ այլ քաղաքական ուժի կամ քաղաքական գործչի քայլը կոռեկտ չեմ համարում մեկնաբանել»: Պարոն Մարգարյանը հարցին՝ եթե այլ կուսակցություններից նույնպես նման տիպի նվերներ բաժանեն՝ դա ձեր կողմից չի՞ դիտարկվի որպես ընտրակաշառք՝ պատասխանեց. «Ինձ թվում է՝ պետք է տարանջատել դրանք: Իհարկե, եթե ընտրությունների շեմին՝ նախընտրական քարոզարշավի ժամանակ, փորձում ես որեւէ բան բաժանել՝ դա այլ է, իսկ եթե փորձում ես ընդհանուր գործունեության ընթացքում քո կուսակիցներին նվերներ տալ՝ դա լրիվ այլ է»:

Հ. ՁԵԲԵՋՅԱՆ

# Կովալենկո Շահգալդյանի փեսային կհաջողվի՞ իր հարկատուն դարձնել Սամվել Ալեքսանյանին

Գյումրիի հարկայինի նորանշանակ պետն ամեն ինչ անում է՝ շաքարի գործարանը այս քաղաքի հարկատուների ցանկում գրանցելու համար:

Դեռեւս անցած տարվա օգոստոսին հարկերը չհավաքագրելու, նախատեսված պլանը չկատարելու մեղադրանքով Գյումրիի հարկային տեսչության պետի պաշտոնից ազատեցին մայրաքաղաքից ժամանած Թելման Ասատրյանին՝ նրա փոխարեն նշանակելով Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգալդյանի փեսային՝ Հրանտ Կարապետյանին: Նա եւս մայրաքաղաքից է, երկար տարիներ աշխատել է այս համակարգում, վերջին 3 տարին պաշտոնավարել է Արթիկում: Արթիկից Գյումրի տեղափոխվելուն պես՝ լուրեր տարածվեցին նոր պետի հարկային քաղաքականության մասին. գյումրեցի պաշտոնյաներից ոմանք պնդում են, որ Հրանտ Կարապետյանն իր վրա դրված պլանը կատարելու, պատվով դուրս գալու համար խոշոր օլիգարխներից մի քանիսին համոզել է որպես հարկատու բերել-գրանցել Գյումրիում: Ըստ որոշ լուրերի, նրանցից մեկը շաքարի գործարանի սեփականատեր, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանն է: Մեր աղբյուրների փոխանցմամբ, հարկայինի նոր պետը չի ուզում ավելորդ աղմուկ բարձրացնել իր անձի շուրջ եւ հարկայինի մյուս պետերի պես հարկային տեսուչներին «ռեյդի» ուղարկել տոնավաճառներ, խանութներ ու վաճառականներին նեղելով՝ պլան կատարել: Նկատենք, որ Գյումրին որոշ առումներով առանձնահատուկ քաղաք է, եւ այստեղ հարկայինի պետ աշխատելն այնքան էլ հեշտ չէ, նախ այն առումով, որ քաղաքը դատարկվում է, ապրանքաշրջանառություն գրեթե չկա եւ Գյումրիից հարկեր ապահովելն ու պետական բյուջե լցնելը, կարելի է ասել, հերոսության նման մի բան է: Բացի այդ, գյումրեցիները սովոր են հարկայինի պետ փոխել, եթե հարկային պաշտոնյան չի կարողանում տոնավաճառի առեւտրականների հետ լեզու գտնել, այստեղ օրերով բողոքի ակցիաներ են կազմակերպում ու պետին խայտառակում: Բողոքի ակցիաներ տեղի ունեցան, օրինակ՝ Գյումրիի նախկին հարկայինի պետ Խաչատուր Երոյանի օրոք:



Օլիգարխների՝ Գյումրիի հարկային դաշտ տեղափոխելու մասին տեղեկատվությունը ճշտելու նպատակով դիմեցինք Պետական եկամուտների կոմիտեի լրատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին: Պարզվեց՝ հարկայինի տարածքային պետերը, թեկուզեւ մեծ ցանկության դեպքում, նման իրավասություն չունեն: ՊԵԿ-ից մեզ փոխանցեցին, որ շրջանառությունն ավելանալու ու սահմանված չափանիշներին համապատասխանելու դեպքում կազմակերպությունները մեխանիկորեն ընկնում են խոշոր հարկատուների ցուցակ: «2010թ.-ին հարկային տեսչությունում գրանցվել է 344 խոշոր հարկատու, 2011-ին թիվը դարձել է 440, իսկ 2012-ին՝ 462, այսինքն՝ այս ցանկը պարբերաբար փոփոխվում է, ու նրանց ցուցակը կարգավորվում է որոշակի չափանիշներով»,- տեղեկացրին մեզ: «Առավոտը» դարձյալ փորձեց ճշտել, թե այդ դեպքում ինչպե՞ս է Սամվել Ալեքսանյանին պատկանող ընկերությունը հարկատու դառնալու Գյումրիում: Պատգամավորին պատկանող «Լուս աստղ շուգրը» ՊԵԿ-ի պաշտոնական կայքում 2010 եւ 2011 թվականներին զբաղեցնում է հանրապետության 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը: Ցուցակում մեկ 36-րդ, մեկ էլ՝ 29-րդ տեղում է՝ այդուհանդերձ խոշոր հարկատու է համարվում եւ գրանցված է Երեւանում: Չնայած պաշտոնական տեղեկատվությանը՝ Գյումրիում համոզված պնդում են, որ այսուհետեւ օլիգարխը հարկեր կմուծի Գյումրիում: Եթե ասվածը ճշմարտություն լինի, այն իրոք կթեթեւացնի հարկայինի պետի գործը, եթե, իհարկե, Հրանտ Կարապետյանին հաջողվի հարկերը գանձել. մեր տեղեկություններով, այս պահին հարկեր չի մուծվում՝ շաքարի գործարանի չաշխատելու պատճառով եւ չի բացառվում, որ եթե այսպես շարունակվի, գործարանը տարվա մեջ 2-3 ամիս աշխատի, հուսախաբ եղած աշխատակիցներին էլ հարկադիր պարապուրդի մատնի՝ «Լուս աստղ շուգրն» էլ կլքի խոշոր հարկատուների ցանկը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## «Մոսկվիչկան» ՀԴՄ կտրոն չի՞ տալիս

«Մոսկվիչկա» սուպերմարքեթը, որը պատկանում է Երեւանի ոստիկանապետ Ներսես Նազարյանի որդուն, արդեն քանի օր է՝ ՀԴՄ կտրոն չի տալիս: Երեկ այս տեղեկությունը լրագրողներից մեկը հայտնեց Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ալավերդյանին: Պարոն Ալավերդյանը հյուրընկալվել էր «Հայելի» ակումբում՝ ներկայացնելու հարկային ոլորտում տեղի ունեցող բարեփոխումները: Հարցին, թե ինչպե՞ս է, որ այդ խոշոր սուպերմարքեթը վրիպել է հարկայինի աչքից եւ արդյոք հարկային տեսուչները նման խախտում չե՞ն արձանագրել, Արմեն Ալավերդյանը պատասխանեց. «Մենք ունենք խանութների մեծ ցանցեր, Հայաստանում չկա այնպիսի տնտեսվարող սուբյեկտ, որ տարվա ընթացքում ինչ-որ խախտում արած չլինի: Ինչ վերաբերում է ՀԴՄ կտրոններին, ապա՝ այո, լինում է այնպես, որ սուպերմարքեթների վաճառողները որոշակի, հատկապես՝ երեկոյան ժամերին ՀԴՄ կտրոն չեն տալիս, մենք ստանում ենք նման տեղեկատվություն մեր «թեժ գծին»: Եվ եթե այդպիսի խախտում են արձանագրում՝ միանգամից տուգանում ենք: Առաջին անգամ տուգանքը 150 հազար է, 2-րդ անգամ՝ 300 հազար եւ 5 օրով գործունեության կասեցում, 3-րդ անգամ 600 հազար դրամ է եւ 10 օրով կասեցում: Այս տարի, օրենքի փոփոխությունից հետո, խոշոր սուպերմարքեթները պետք է ավելի զգույշ լինեն, որովհետեւ, եթե ՀԴՄ կտրոն չտան եւ այդ խախտումը արած լինեն 2-րդ անգամ, տուգանքի չափը կկազմի, հաշվետու ժամանակահատվածի, հասույթի 2%-ի չափով»: Հարցին՝ այնուամենայնիվ տուգանվե՞լ է «Մոսկվիչկան», պարոն Ալավերդյանն ասաց՝ այո:

Լ. Բ.




**2011թ-ի «ՍԹԱՐ սոցիալական զամբյուղ» նախագծի ամփոփում**

2012թ հունվարին ՍԹԱՐ առևտրային ցանցն ամփոփեց «ՍԹԱՐ սոցիալական զամբյուղ» նախագծի նախորդ տարվա արդյունքները: Արդյունքում պարզ դարձավ, որ նախագծի մեկնարկից՝ 2011թ. օգոստոսի 1-ից մինչ դեկտեմբերի 31-ը զամբյուղի արժեքը բարձրացել է 1.43%-ով:

Նախագծի արդյունքներն ամփոփելիս հաշվի են առնվել գնային բոլոր փոփոխությունները, որոնք նախագծի իրականացման 5 ամիսների ընթացքում անդրադարձել են զամբյուղի արժեքի բարձրացմանը 1.43%-ով: Այս ցուցանիշի վրա ազդել են 2 հիմնական գործոն՝ սեզոնայնությունը (0.082%) և մատակարարման գնի փոփոխությունը (1.34%): Վերջինս պայմանավորված է եղել հիմնականում արտաքին գործոններով, ինչպիսիք են համաշխարհային շուկայում հումքային ապրանքների գների անկայունությունը և ներքին շուկայում ինֆլյացիոն ֆոնը: Զամբյուղի արժեքի բարձրացման վրա առավելագույն ազդեցություն է ունեցել շաքարավազի թանկացումը 19.7 %-ով:

Նշենք, որ «ՍԹԱՐ սոցիալական զամբյուղ»-ի ապրանքների գնաճի զսպումը հնարավոր է դարձել ցանցում իրականացվող շաբաթական ակցիաների արդյունքում, որոնք զամբյուղի ընդհանուր արժեքն իջեցրել են 0.81%-ով:

Հիշեցնենք, որ «ՍԹԱՐ սոցիալական զամբյուղ» նախագիծը մեկնարկել է 2011թ. օգոստոսի 1-ին: Նախագծի նպատակն էր սահմանել վերահսկողություն առաջին անհրաժեշտության ապրանքների նկատմամբ: Նախագծի շրջանակում՝ երկշաբաթյա պարբերականությամբ, ներկայացվում էր զամբյուղի ընթացիկ արժեքի փոփոխությունը նախորդ ցիկլի նկատմամբ:

«ՍԹԱՐ սոցիալական զամբյուղ» նախագծում ներառված են լայն պահանջարկ ունեցող 180 ապրանքային միավոր, ինչպես օր՝ շաքարավազը, Լոռի և Չիրակ պանիրները, մածունը, կաթը, կարագը, թթվասերը և այլ սոցիալական նշանակության ապրանքներ:

## 3 եղբորը կալանել են՝ առանց ապացույցի՞

Օրերս «Առավոտ» օրաթերթը Իջեւանի Հանրապետական կուսակցության համակիրների անունից շուրջ 3000 ստորագրությամբ մի նամակ է ստացել՝ ուղղված ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանին: Նամակի բովանդակությունը հետեւյալն է. «Մեծարգո ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան, 2011թ. դեկտեմբերի 27-ին Իջեւան քաղաքի ոստիկանություն են հրավիրվել ՀՀԿ անդամներ Հովիկ, Շեկո, Վարդան Խեչյան եղբայրները: Նրանց առաջադրվել է մեղադրանք՝ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով: Տեղեկացնում ենք Ձեզ, որ վերոնշյալ քրեական գործում չկան տուժողներ, չկա բողոք, չկան մարմնական վնասվածքներ ստացած անձինք եւ բավարար հիմքեր, սակայն նրանց նկատմամբ, չգիտես ինչու, ընտրվել է խափանման միջոց կալանքը: Ուզում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ վերոհիշյալ անձինք 2011թ. նոյեմբեր ամսին հրավիրվել են ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչություն եւ երկարատեւ ու մանրամասն հարցաքննություններից հետո ազատ են արձակվել՝ քրեական գործին առնչություն չունենալու պատճառով:

Միաժամանակ հայտնում ենք Ձեզ, որ եղբայրներից ՀՀԿ-ի կողմից առաջադրված ավագանու թեկնածու 23-ամյա Հովիկ Խեչյանը 2011թ. մայիսի 29-ին կայացած ընտրությունների ժամանակ առավելագույն ձայներն է հավաքել 25 թեկնածուների մեջ (800 ձայն): Այնուհետեւ ՀՀԿ-ի կողմից Հովիկ Խեչյանը նշանակվել է որպես Հանրապետական կուսակցության երիտասարդական թեւի ղեկավարի տեղակալ: Մեծարգո պարոն նախագահ, Իջեւան քաղաքի եւ հարակից գյուղերի հասարակության անունից խնդրում ենք Ձեզ հանձնարարել համապատասխան մարմիններին, որպեսզի Խեչյան Հովիկ, Շեկո, Վարդան եղբայրներին ազատ արձակեն, քանի որ նրանք երբեւէ քննությունից չեն խուսափել, միեւնույն ժամանակ խնդրում ենք հանձնարարել իրավապահ մարմիններին, որպեսզի քննությունն ընթանա օրինականության շրջանակներում»:

Սեփ. լր.

Հ. Գ. «Առավոտին» ուղղված նամակի հետ առկա 3000 ստորագրության փաստաթղթերը գտնվում են խմբագրությունում:

## Էրեբունու որոշ հասցեներ կջրազրկվեն

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. հունվարի 19-ին, ժամը 10.00-22.00 կդադարեցվի Էրեբունի վարչական շրջանի Արցախի պողոտայի թիվ 10, 10/1, 10Ա, 10Բ, 10Գ, 10Վ, 12, 12Ա եւ Գ. Նժդեհի փողոցի թիվ 58 շենքերի ու հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

Առավոտ
aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 19.01.2012

# Լարված վիճակ՝ սահմանամերձ Սեւքարի դպրոցում

## Սամբո դասավանդելու հարցը մինչեւ Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանին է հասել

Ծննդով Ենոքավան գյուղից Դավիթ Գաբրիելյանն արդեն 4 տարի Սեւքարի նախկին գյուղսովետի շենքի 2-րդ հարկում երեխաներին սամբո է ուսուցանում: Մարզիչն ասում է, որ պարապմունքների համար ամսական 1000-2000 դրամ (կախված՝ ծնողների սոցիալական վիճակից) վարձ է գանձում: Նրա վկայությամբ՝ իր 80 սաներից ոմանք չեն կարողանում այդ գումարը վճարել: Մարզիչը հպարտությամբ է պատմում սաների նվաճումների մասին, նրանք Հայաստանի մանկապատանեկան առաջնություններում, զանազան մրցաշարերում հաջողությունների են հասել: Դավիթի խոսքերով՝ մոտ մեկ տարի առաջ Սեւքարի դպրոցի տնօրեն Սամվել Ճաղարյանն իրեն հրավիրել է դպրոց՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ աշխատելու, նաեւ սամբոյի պարապմունքներն այնտեղ անցկացնելու: Դավիթը հրաժարվել է, սակայն դպրոցի տնօրենը շարունակել է նրան համոզել: Դավիթը վկայում է՝ Սամվել Ճաղարյանը ուրիշների մոտ դժգոհել է, որ «չուժոյ» մարզիչն իր պարապմունքների հասույթով «ԲՄՎ» է գնել: Մարզիչն ասում է, որ մինչեւ մեքենա գնելը 3 տարի պատահական տրանսպորտով է Իջեւանից Սեւքար հասել: Երբ Գաբրիելյանը հրաժարվել է դպրոցում ուսուցիչ աշխատելու եւ այնտեղ սամբոյի պարապմունքներն անցկացնելու Ճաղարյանի առաջարկից, տնօրենի ցուցումով դպրոցի ուսուցիչները սկսել են սամբո մարզաձեւի եւ դրա խմբակի դեմ հակաքարոզչություն անել: Սեւքարեցի Ջիվան Քոչարյանն ասում է. «Համադպրոցական ծնողական ժողովում դպրոցի տնօրենն ասաց, որ սամբոն երեխաների առողջությանը վնասակար է, ինքը բոքսի մարզիչ է բերելու, որ երեխաներն այդ մարզաձեւով պարապեն»: Սեւքարի դպրոցի աշակերտները գյուղապետարանում մեզ հետ զրույցում պատմեցին, որ ուսուցիչներն իրենց ծնողներին համոզել են երեխաներին հանել սամբոյի խմբակից, ասելով, որ այլապես տարեվերջին գնահատականների հարցով երեխաները խնդիրներ են ունենալու: Հունվարի 16-ին սամբոյի խմբակի երեխաները դպրոց են գնացել, որպեսզի դիմում գրեն հարեւան՝ Սարիգյուղի դպրոց տեղափոխվելու համար: Նրանց ընդունել է ուսմասվար Հասմիկ Հովսեփյանը, որը երեխաներին հաղորդել է տնօրենի խոսքը, որ դպրոցից տեղափոխվելու համար հարկավոր է ծնողների դիմումը: Երեխաները դրանից հետո ծնողների հետ են դպրոց գնացել, սակայն Սամվել Ճաղարյանը նստել է իր ավտոմեքենան եւ հեռացել: Հունվարի 17-ին դպրոցի մոտ 70 աշակերտներ նորից դասադուլ էին արել, նրանք ծնողների հետ գնացել էին գյուղապետարան: Ծնողներն իրենց եւ աշակերտների բողոքը լսելու համար գյուղապետարան էին հրավիրել Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Աշոտ Փաշինյանին եւ մարզպետարանի տարածքային կառավարման վարչության պետ Միշա Մխիթարյանին: Ներկա էր «Առավոտի» թղթակիցը: Գյուղապետ Վլադիմիր Մարգարյանի աշխատասենյակում աշակերտները բողոքը հայտնելով՝ ներկայանում էին, սակայն որպեսզի հետո խնդիրներ չունենան, նրանց խոսքը ներկայացնում ենք առանց անուն-ազգանունների: 10-րդ դասարանցի. «Մեր դասղեկ Հասմիկ Ստեփանյանը մայրիկիս ասել է, եթե ես սամբոյի խմբակից դուրս չգամ, դա ազդելու է իմ տարեվերջյան գնահատականների վրա»: 9-րդ դասարանցի. «Մեր դասղեկ Ալվինա Ամիրջանյանը մեզ ասաց՝ դուք քննական դասարան եք, այս սամբոյի հարցն ի՞նչ եք անում, չե՞ք ուզում դուրս գալ, դպրոցում ուրիշ մարզաձեւի խմբակ է բացվում: Մենք ասացինք՝ դուրս չենք գալու»: 8-րդ դասարանցի. «Ֆիզիկայի ուսուցչուհի Ծովինար Մխիթարյանն ասաց, որ սաղ սամբիստները անասուններ են, ձեր ուղեղները լցրել են տղամարդկային խոսքով, դուք սխալ մտածելակերպ ունեք»: Երեխաները վկայեցին՝ երբ ընդվզել են ֆիզիկայի ուսուցչուհու դեմ, նա դասարանից 5-6 հոգու դուրս է արել: Նաեւ հայտնեցին, որ տնօրենը 2 դասղեկի՝ Յուլյա Մանուչարյանին եւ Հասմիկ Ստեփանյանին դասղեկությունից զրկել է այն բանի համար, որ սամբոյի խմբակից երեխաներին հանելու իր պատվիրանը ճիշտ չեն հասցրել ծնողներին: Երեխաների խոսքերով՝ տնօրենը նրանց դասղեկությունից զրկելու այլ՝ պաշտոնական ձեւակերպում է արել: Մարզպետարանի 2 աշխատակիցների հետ եղանք Սեւքարի դպրոցում: Տնօրեն Սամվել Ճաղարյանն արդեն 27 տարի ղեկավարում է ներկայումս 326 աշակերտ, շուրջ 50 աշխատակից ունեցող դպրոցը: Նա 2011թ. նոյեմբերի 6-ին մրցույթով, առանց մրցակցի, միաձայն վերընտրվել է իր պաշտոնում: Տնօրենն ասաց, որ ինքը գործել է իր իրավասությունների շրջանակում, երեխաներն իրենք են որոշում, թե ինչ մարզական կամ մշակութային խմբակ կհաճախեն, ինքը չի խոչընդոտել: Տնօրենի խոսքերով՝ ինքը մի մտահոգություն ունի, որ խմբակ հաճախելը վատ չանդրադառնա նրանց ուսման առաջադիմության վրա: Սամվել Ճաղարյանն ասաց, որ դասղեկները աշակերտների տներ են այցելել, որ տեսնեն նրանց պայմանները, որ դպրոցի կանոնադրության 7-րդ կետով սահմանված է՝ զանազան խմբակներին մասնակցությունը չպետք է արգելք լինի նրանց ուսման առաջադիմությանը կամ առողջությանը: Նրա խոսքերով, դասղեկներ Յուլյա Մանուչարյանն ու Հասմիկ Ստեփանյանը դասղեկությունից զրկվել են ոչ թե սամբոյի խմբակի հետ կապված խնդրով, այլ այն պատճառով, որ նրանց ղեկավարած դասարաններում կարգապահության վատ վիճակ է, աշակերտները կոտրել են ուսումնական գույքը: Հայոց լեզվի ուսուցչուհի, 45 տարվա ստաժ ունեցող Հասմիկ Ստեփանյանը տնօրենի ներկայությամբ հաստատեց նրա խոսքերը: Տեղեկացանք, որ 63 տարեկան ուսուցչուհին կարող էր արդեն անցնել թոշակի, սակայն շարունակում է աշխատել տնօրենի բարի կամքով, նրա համաձայնությամբ: Տավուշի մարզպետարանի կրթության վարչության պետ Աշոտ Փաշինյանն ասաց, որ իրենց համար անպատասելի է Սեւքարում ստեղծված իրավիճակը, եւ իրենք ուսումնասիրություններ պետք է կատարեն: Հունվարի 18-ին Սեւքարի դպրոցի շուրջ 30 աշակերտ դասի չի գնացել՝ շարունակելով բողոքել դպրոցի տնօրեն Սամվել Ճաղարյանի գործելակերպի դեմ: Ըստ աշակերտների՝ Ճաղարյանը ժողովում հայտարարել է, որ սամբոն էրոտիկ մարզաձեւ է: Աշակերտները «Առավոտի» թղթակցին ասացին, որ 27 տարվա դպրոցի տնօրենն իրենց խորհուրդ է տվել սամբոյի փոխարեն ծանրամարտով զբաղվել (Սեւքարի դպրոցում ծանրամարտի խմբակ կա), քանի որ, տնօրենի համոզմամբ, ծանրամարտով հնարավոր է արագ հարստանալ: Որպես արագ հաջողության օրինակ՝ Սամվել Ճաղարյանը նշել է ծանրորդ Տիգրան Մարտիրոսյանին: Սեւքարի դպրոցում եւ սահմանամերձ այդ գյուղում լարված իրավիճակը շարունակվում է: Հունվարի 18-ին Սեւքարի դպրոցում եւ գյուղում առկա վիճակը Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը քննարկել է Սեւքարի գյուղապետ Վլադիմիր Մարգարյանի հետ:

ՌՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ



ԻՐԱՎՈՒՆՔ

# Ամբաստանյալներն անմե՞ղ են

Նախնական համաձայնությամբ ավազակային հարձակում կատարելու մեջ մեղադրվող վանաձորցի Սերգո Հարությունյանի պաշտպան, փաստաբան Կարեն Թումանյանը դիմել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան: Փաստաբանը պահանջում է ամբողջությամբ բեկանել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի անցած տարվա դեկտեմբերի 23-ի վճիռը՝ իր պաշտպանյալի մասով՝ կայացնելով նրա նկատմամբ արդարացման դատավճիռ:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանը, դատավոր Սուրեն Բաղդասարյանի նախագահությամբ, 1 տարի 8 ամիս տեւած դատաքննությունից հետո, համապատասխանաբար՝ 8 եւ 7 տարվա ազատազրկման է դատապարտել Վանաձորի բնակիչներ՝ 20-ամյա Ռուբեն Գեւորգյանին ու 19-ամյա Սերգո Հարությունյանին:

Ըստ գործի նյութերի՝ տղաները, ուրիշի գույքը հափշտակելու նպատակով, 2010թ. ապրիլի 23-ին, նախնական համաձայնությամբ, որպես զենք օգտագործվող առարկայի գործադրմամբ հարձակվել են Վահե Ալավերդյանի վրա եւ վերջինիս կյանքի ու առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելու սպառնալիքով նրանից հափշտակել 200. 000 դրամ:

Դատական քննության ընթացքում, սակայն, Հունաստանում բնակվող տուժող Վահե Ալավերդյանը Հունաստանի Հանրապետությունից նոտարի կողմից վավերացված դիմում էր ուղարկել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ հայտարարելով, որ ամբաստանյալներն անմեղ են, իսկ նախաքննական մարմնին ու դատարանում տված ցուցմունքները սուտ են եւ կորզվել են ճնշումների ներքո:

Հայտարարությունը դատարանը ապացույց է ճանաչել, նրա մեջ առկա տեղեկություններն էլ համարել անարժանահավատ:

«Դատարանը եզրահանգել է, որ ոստիկանության աշխատակիցները չէին կարող Վահե Ալավերդյանին ուղղորդել կամ ստիպել, որպեսզի նա որպես իր նկատմամբ ոտնձգություն կատարած անձ հաղորդման մեջ նշի նաեւ Սերգո Հարությունյանի անունը. ոստիկանները չէին կարող իմանալ նրա նկատմամբ ոտնձգություն կատարողների անունները»,- ասում է փաստաբանը՝ հավելելով, որ դատարանը Սերգո Հարությունյանի մեղքը հաստատելու համար հիմք է ընդունել նաեւ այնպիսի ապացույցներ, որոնք ձեռք են բերվել վկա Ռուսլան Մարտինովին եւ մեղադրյալ Ռուբեն Գեւորգյանին խոշտանգելու արդյունքում:

Մեղադրական դատավճիռ կայացնելու օրը դատավոր Սուրեն Բաղդասարյանը որոշում է կայացրել միջնորդել դատախազին՝ ամբաստանյալներին ու վկա Ռուսլան Մարտինովին նախաքննության ընթացքում հարցաքննությունների ժամանակ խոշտանգման ենթարկելու փաստի առթիվ քրեական գործ հարուցելու եւ մեղավոր անձանց հայտնաբերելու ու քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

«Տվյալ պարագայում դատավորը կայացնում է քրեական գործ հարուցելու մասին հանդես գալու միջնորդության որոշում եւ, միաժամանակ, հակասելով իր այդ քայլին, մեղադրյալների մեղքը հաստատող ապացույց օգտագործում նաեւ Ռուսլան Մարտինովի նախաքննական ցուցմունքը»,- բացատրում է Կարեն Թումանյանը:

Նա պնդում է, որ դատաքննությունը ընթացել է բազմաթիվ խախտումներով, նախաքննական մարմինն էլ չի պատասխանել այն հարցին, թե տղաները ինչպես են նախնական համաձայնության եկել:

«Բացի այդ՝ դատարանը պարտավոր էր հաստատված համարել այն հանգամանքը, որ Սերգո Հարությունյանը դեպքի օրը գործնականում մի քանի անգամ հնարավորություն է ունեցել Վահե Ալավերդյանի գումարը հափշտակելու, ինչը ապացուցում է, որ Սերգո Հարությունյանը մտադիր չի եղել տիրանալու ուրիշին պատկանող գումարին»,- ասում է փաստաբան Թումանյանը:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

## Արտակ Նազարյանի գործով դատն այսուհետեւ տեղի կունենա Իջեւանում

Պայմանագրային զինծառայող Արտակ Նազարյանի մահվան գործով երեկ, ժ.12-ին, նշանակված դատական նիստը նախագահող Սամվել Մարդանյանը հետաձգեց:

Որպես պատճառ նշվեցին արտագնա նիստերի ժամանակ հասարակական կարգի պահպանության անհնարինությունը, նաեւ երեկվա անկարգությունները: Դատական հաջորդ նիստը նշանակվեց հունվարի 24-ին, ժ. 14-ին՝ Տավուշի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Իջեւանի նստավայրում: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ՝ Ռուբեն Մարտիրոսյանի «Ներողություն, մենք հայտարարություն ունենք»,-ը դատավորը չլսեց եւ հեռացավ:

Նիստերի դահլիճից չէին հեռանում ամբաստանյալների հարազատները, որոնց կարծիքով կատարվածը խուլիգանություն է. «Մայրաքաղաքից հեռացնում են, որպեսզի մարդիկ չտեսնեն՝ ինչ է կատարվում»: «Մարդակերներ, հանցագործներ»,- բղավում էին նրանք:

«Ինչ են ուզում իմ տղայից»,- հարցնում էր ամբաստանյալ Ադիբեկ Հայրապետյանի մայրը՝ Ջավահիր Հովհաննիսյանը. «Մեր երեխաներին զենքի նման պահում են այստեղ, ինչ են ուզում՝ չգիտենք: Ի՞նչ է արել Ադիբեկը: Տղայիս 1 տարի 7 ամիս է՝ նստացրել են, էլի բանակին զինվոր եմ տվել, 17 օր է՝ ծառայում է: Այս դատական գործը շինծու գործ է: Մայր եմ՝ կդիմանա՞մ: Ամեն օր վախը սրտիս մեջ է»: Ադիբեկի մայրն ասաց, որ ամբաստանյալներին բոլորին ծեծել են եւ ծեծով ցուցմունքներ կորզել: Ի դեպ, Հարությունյան Կիրակոսյանի հայրը aravot.am-ին ասաց, որ երբ անցյալ տարի գնացել են Գայի (նախկին Խաթունախ) գյուղ, վկա Արման Մնացականյանի հայրն ասել էր, որ այնքան են իր որդուն ծեծել՝ արյուն էր միզում: Դատական կարգադրիչներն ազատեցին դատարանը հարազատներից՝ կանխելով հնարավոր բախումները:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# Ըստ Ռուբեն Հախվերդյանի, Մաշտոցը չէր ուզենա Պուգաչովայի հետ մերձենալ

Երեկ «Հայելի» ակումբում լրագրողների հետ հանդիպեցին ճանաչված արվեստագետներ Ռուբեն Հախվերդյանն ու Սերգեյ Դանիելյանը: «Երկու կիսախելագարի կանչել ես, մտածում ես նորմալ բան ա ստացվելու»,- ներս մտնելուն պես ասաց Ռուբեն Հախվերդյանը ու ցուցադրաբար օծանելիք ցողեց վրան:

Հարցին՝ ներկա քաղաքական ակտիվության համատեքստում ի՞նչ դիրքորոշում պիտի ունենա արվեստագետը, երգիչ-երգահանը պատասխանեց.

«Դրա համար մի հատ սոցիոլոգ պիտի բերվի ստեղ, որ իմանանք՝ ինչքան մարդ է ստեղից հոգին ազատել-գնացել, ինչքան դիակներ են բերվում Ռուսաստանից եւ ինչ պատճառներով, բնականաբար քսենոֆոբիա է, էկոլոգ է պետք հրավիրել, որի պատճառով մարդիկ նույնպես լքում են երկիրը... օրինակ՝ Թեղուտի պատմությունը... Նման մարդիկ են պետք, որ ընդհանուր պատկերացում կազմենք, թե ի՞նչ է կատարվում էս երկրում: Հայաստանը ոնց որ ռուսների պոլիգոնը լինի՝ իրենց զենքերը տնկել են ստեղ եւ մեզ շատ սիրում են ու սիրելուց հետո գիտեք՝ ինչ են անում մարդիկ, տվյալ դեպքում մեր ոխերիմ բարեկամները»:

Խոսելով համատարած դեգրադացման ու բոլոր ոլորտներում նշաձողի անկման մասին, Հախվերդյանն անդրադարձավ մշակութային քաղաքականությանը, պետական պարգեւներին եւ անհաջող արձաններին: «Առավոտի» հարցին՝ ո՞ւմ կուզենար տեսնել մշակույթի նախարարի պաշտոնում, Ռուբեն Հախվերդյանը պատասխանեց՝ ինձ: Իսկ առաջին քայլը ո՞րը կլիներ: «Կհավաքեի էդ սաղ մեդալներն ու կոչումները ու....»,- պատասխանեց արվեստագետը: «Աբսուրդ բաներ են կատարվում, կոչումներ են տալիս, մեդալներ, օրինակ՝ «Մեսրոպ Մաշտոց»՝ Ալլա Պուգաչովային, այն դեպքում, երբ Մեսրոպ Մաշտոցը մեր սրբերի կարգում է դասվել, իսկ Ալլա Պուգաչովան ոչ միայն նողկալի երգչուհի է, պոպսայի հիմնադիրը, այլեւ բարոյապես կայուն երեւույթ չէ... Մեսրոպ Մաշտոցը, շատ ներողություն, չարժի որ կախվի նրա կրծքավանդակից, որովհետեւ եթե Մաշտոցը նրան տեսներ, բոլորովին ցանկություն չէր ունենա նրա հետ մերձենալու...Մի ուրիշ բան էլ հիշեցի՝ Վիլյամ Սարոյանի արձանը, որը նույնպես նողկալի բան ա...ոնց որ ինքն իր գերեզմանին եկած լինի...Չնայած գերեզմանը Ֆրեզնոյում է, սիրտն ա ստեղ...Ես էլ կուզենայի իմ օրգաններից մեկը հայրենիքում թողնել...Մեկը, երբ լսեց էդ մասին, ասաց՝ ինչ անամոթ մարդ եք, ասացի, բայց դուք ի՞նչ նկատի ունեք, շատ մտասեւեռուն տիկին էր... Ու դա (Սարոյանի արձանը - Գ. Հ.) նենց ախմախ տեղ են դրել՝ Քոչարի նման հանճարեղ արվեստագետի դռան դիմաց...Քոչարը նույնիսկ Սարյանից էլ մեծ երեւույթ է...»:




Ռուբեն Հախվերդյանը կոչ արեց չընտրել 3 նախագահներից որեւէ մեկին ու նշեց, որ փոփոխություն է ակնկալում: Նրա ձեւակերպմամբ, հեղափոխություն է պետք, եւ նոր, թարմ ուղեղով գործիչ:

Ինչ վերաբերում է ժամանակին դաշնակցական Վահան Հովհաննիսյանի կողքին կանգնած լինելուն. «Վահանը իր ինտելեկտով ավելի բարձր ա, քան երեք նախագահները իրար հետ վերցրած...Եթե երբեւէ կուսակցական դառնամ՝ կանաչ եմ լինելու, բնապահպանություն»:

Խոսելով արվեստագետների քաղաքականացվելու մասին, դերասան Սերգեյ Դանիելյանը (Յոժ) հայտարարեց, որ ինքը բոյկոտում է քաղաքականությունը եւ մասնավորապես ընտրությունների ժամանակ ինչ-որ մեկի «դրոշի» ներքո հանդես չի գա. «Արվեստագետը պիտի չեզոք մնա, ես էդ գործում չկամ»:

«Պալատական» արվեստագետների ու նրանց պատկերներով «Իմ զենքը...» պաստառների մասին խոսելիս, դրանք ծաղրող Ռուբեն Հախվերդյանին Յոժն ասաց. «Պատկերացնում եմ Ձեր դեպքում Ձեր զենքը ինչը կլիներ»: Իսկ դրանից առաջ Հախվերդյանը խոսել էր իր օրգաններից մեկը Սարոյանի օրինակով հայրենիքում թողնելու մասին:

Սերգեյ Դանիելյանն արվեստագետներին առաջարկեց չծախվել՝ «Էդ ինչքա՞ն փող պիտի տան, որ կանգնեք ինչ-որ դեպուտատի, նախագահի կամ օլիգարխի կողքին»:

Այնուհետեւ հավելեց. «Շուտով կսկսեն ձեզ լիքը բաներ առաջարկել, չգիտեմ՝ ով կերգի, ով կպարի կամ կարտասանի, բայց ես խորհուրդ եմ տալիս, որ գոնե էդ բանը, որ անում եք, ինչ-որ մեկի կողքին կանգնած չանեք, խոստումները սուտ են, դո՞ւք էլ եք վարկաբեկվում: Եթե ես արվեստագետ եմ, համերգ եմ դրել, դա իմ աշխատանքն է, որ անում եմ, բայց եթե այդ համերգը ինչ-որ լոզունգի տակ եմ անում, նշանակում է՝ որեւէ մեկի ջրաղացին ջուր եմ լցնում: Վաղը կպարզվի, որ էդ մարդը հանցագործ է, եսիմ ինչ է: Հետո ձեզ են հիշելու, ձեր արածը, թե չէ քաղաքական գործիչը զուգարանի թղթի նման բան է, օգտագործեցին, գնաց»:

Դերասանն ասուլիսում անդրադարձավ նաեւ մեր իրականությանն ու օրենքներին, որոնց անկատարությունը մեկնաբանեց սեփական օրինակով. «Վերջերս նորից տեխասմոտր եմ անցել: 20 տարվա ընթացքում չհասկացանք՝ տեխստուգատես Հայաստանում ո՞նց պետք է անցնեն: Ամեն անգամ բան են փոխում, դա նշանակում է, որ էն մարդը, որ ստեղծում է օրենք, շիմպանզեի ուղեղ ունի...»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

## Այս տարի ասպիրանտուրա հեշտ չեն ընդունվի

Շիրակի, Լոռու, Տավուշի ու Կոտայքի մարզերում այս տարի նվազագույնը 80 նախակրթարան է բացվելու եւ մոտ 8000 մանկավարժ վերապատրաստվելու է. կրթության ոլորտում այս տարվա առաջնահերթ անելիքներից երեկվա ասուլիսում սա առանձնացրեց ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը:

Վերապատրաստում անցած մանկավարժների աշխատավարձերում նախատեսվում են հավելումներ, իսկ կրթաթոշակներում՝ ոչ: Փոխարենը նախարարությունը կխրախուսի լավագույն ուսանողներին:

Ինչ վերաբերում է ընդունելության քննություններին, նախարարը տեղեկացրեց, որ դրանց մեկնարկի փոփոխություն չի լինի, բայց կավարտվեն ավելի շուտ: «Որ չխոչընդոտենք զինկոմիսարիատներին աշխատել բուհ չընդունված տղաների հետ»,- բացատրեց պարոն Աշոտյանը: Նրա խոսքերով, այս տարի կմշակվի ու հաջորդ տարվանից կգործի նաեւ բուհերի ու դպրոցների վարկանիշային համակարգը: Նախարարի համոզմամբ, համակարգի ներդրումը ուսումնական հաստատություններում կրթության որակը չափելու համար լավ գործիք է, ու հասարակության շրջանում էլ մեծ պահանջարկ ունի: Պարոն Աշոտյանն ասաց նաեւ, որ այս տարի, նախորդ տարվա համեմատ, բարդացվելու է գիտական աստիճանաշնորհման գործընթացը: Ասպիրանտուրա ընդունվելը լինելու է շատ դժվար. «Դեռ անցած տարվանից էր խստացվել շեմը, նախորդ տարի տեղացիների շրջանում 50-ով պակասել էր պաշտպանությունների թիվը ու եթե անցած տարի թղթային քննությունն էր անցնում, այս տարի անցնելու է միայն օնլայն քննությունը»:

ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

## Զեղչեր՝ տղամարդկանց համար

«Արմավիա» ավիաընկերության մամուլի ծառայությունը հայտնում է, որ «Արմավիա» ավիաընկերությունը հունվարի 28 ից մինչեւ փետրվարի 23 ը ներառյալ բոլոր տղամարդկանց, ովքեր կօգտվեն «Արմավիա» ավիաընկերության ուղիղ չվերթներից ցանկացած ուղղությամբ, կտրամադրի 15%-ի զեղչ:

Զեղչերը տարածվում են միայն նշված ժամկետում նախատեսված թռիչքների համար:

# «Գրպանի երգարան»՝ ոչ միայն գրպանի համար

Օրերս Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում կայացավ 7 գրքույկներից ու խտասալիկներից կազմված «Գրպանի երգարան» մատենաշարի շնորհանդեսը: Առաջին իսկ պահերից (սցենարի հեղինակ եւ ռեժիսոր՝ Լեւոն Իվանյան) փորձ էր արվում մատենաշարը ներկայացնել հավուր պատշաճի, ինչը գրեթե ստացվում էր, քանի որ երգարանում իսկապես ներառված են հայ իրականության տարբեր ժամանակներում ստեղծված, երգված ու ժամանակի ընթացքում սիրված երգերը: Խոսքը վերաբերում է միջնադարի հայ աշուղական, ժողովրդա-գուսանական արվեստից սկսած մինչեւ Կոմիտաս, Եկմալյան, Խաչատրյան, Բաբաջանյան, Այվազյան... մինչեւ ժամանակակից կոմպոզիտորական արվեստ: Ստեղծագործությունները ներկայացված են տեքստերի եւ երաժշտության հեղինակների անուն-ազգանուններով, նաեւ տեղեկատուի մեջ ներառված՝ հայ երգի պատմության մեջ իրենց տեղն ու դերը ներկայացնող համառոտ ակնարկներով:

Երեկոյի ընթացքում աստիճանաբար ձեւավորվեց բավական ազդեցիկ տպավորություն, եւ որքան էլ երեկոյի հանդիսավար, դերասան Ազատ Գասպարյանը նեղսրտեց, որ երգարանում չկա, օրինակ, իր ամենասիրելի՝ գուսան Շերամի «Զեյրանի պես սարերով եկար ու անցար»-ը, այնուամենայնիվ, հույս հայտնեց, որ առաջիկայում ծրագրավորված՝ ըստ մաշտոցյան այբուբենի, համապատասխան 36 հատորներում տեղ կգտնեն բոլոր սիրված երգերը:

Բեմում էկրանի վրա էջ առ էջ թերթվում էին գրքույկները եւ արդեն շնորհանդեսի ավարտին հանդիսատեսն էլ կարծես թերթել էր երգարանի բոլոր էջերը: Ելույթ ունեցան ճանաչված խմբեր, երգիչ-երգչուհիներ, ու այնքան «շիկացավ» մթնոլորտը, որ Կոմպոզիտորների միության նախագահ Ռոբերտ Ամիրխանյանը հանդապատրաստից բեմ բարձրացավ ու ամբողջ ձայնով, հոգով ու ոգով հնչեցրեց «Երազ իմ երկիր հայրենի»: Նաեւ առաջիկայում ներկաներին հրավիրեց Դիլիջանի կոմպոզիտորների տուն՝ հավաստիացնելով, որ կկազմակերպի երգարանում տեղ գտած ստեղծագործությունների ուսուցում:




Ա. Գեւորգյանը, Ս. Հարոյանը (կենտրոնում) եւ Լ. Իվանյանը:

«Գրպանի երգարանի» աշխատանքների մեջ ձեւավորված է հեղինակավոր մասնագիտական խմբագրակազմ, որը բծախնդիր աշխատանք է իրականացրել ակադեմիական չափանիշներով ներկայացնելու հայ երգի մաքրությունը: Խմբագրակազմի անդամներն են երգիչներ Թովմաս Պողոսյանը, Արմեն Դարբինյանը, Կոմպոզիտորների միության փոխնախագահ Դմիտրի Առաքելյանը եւ այլք: Խմբագիրն է երաժշտագետ Անի Փաշայանը, իսկ նախաձեռնողը, կազմողն ու հրատարակիչը՝ Սամվել Հարոյանը: Մենք արձանագրեցինք մի փաստ. շնորհանդեսի ավարտին, հանդիսասրահից հեռացող ունկնդիրները, այդ թվում՝ նաեւ անվանի արվեստագետներ Հովհաննես Չեքիջյանը, Նորայր Մեհրաբյանը, Արամ Սաթյանը, Ռուբեն Ասատրյանը եւ ուրիշներ, կարծիք էին հայտնում, թե այս «Գրպանի երգարանը» այնքան էլ գրպանի համար չէ եւ ճիշտ կլինի, որ մեր «աստղերը» սիրված երգերը ներկայացնելուց առաջ գոնե ծանոթանան դրանց օրիգինալին՝ թե տեքստային եւ թե երաժշտության մասով:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ